



Տարածաշրջանում անդրսահմանային համագործակցության ծրագիրը կնպաստի կենսաբազմազանության պահպանության իրական միջավայրի ստեղծմանը

Սեպտեմբերի 19-ին Վրաստանի Սամցխե-Ջավախքի շրջանում և ՀՀ Շիրակի մարզում տեղի են ունեցել «Արփի լիճ» ազգային պարկի և «Ջավախքի» պահպանվող տարածքների անդրսահմանային միջոցառումները, որոնց մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարարության պատվիրակությունը՝ նախարար Արծվիկ Մինասյանի գլխավորությամբ, Վրաստանի շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների նախարարության պատվիրակությունը՝ փոխնախարար Եկատերինա Գրիգալավայի գլխավորությամբ: Միջոցառումներին ներկա են գտնվել նաև ՀՀ-ում և Վրաստանում Գերմանիայի Ռաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպաններ Մաթիաս Կիսլերը և Հայքե Պախիջը, KFW բանկի Հարավային Կովկասի տարածաշրջանային գրասենյակի, Բնության համաշխարհային հիմնադրամի Անդրսահմանային միացյալ քարտուղարությունն ծրագրի ներկայա-



ցուցիչներ, երկու երկրների վարչական շրջանների պատվիրակություններ, ՀՀ Շիրակի մարզպետ Արթուր Խաչատրյանը, բնապահպանական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Միջոցառումը կազմակերպվել էր «Անդրսահմանային միացյալ քարտուղարություն, փուլ III» ծրագրի շրջանակներում՝ Բնության համաշխարհային հիմնադրամի Կովկասյան գրասենյակի հայաստանյան մասնաճյուղի, ինչպես նաև Հայաստանի բնապահպանության նախարարության ու Վրաստանի շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության նախարարության կողմից՝ ընդգծելու անդրսահմանային համագործակցությունը՝ կենսաբազմազանության մոնիթորինգի և զբոսաշրջության խթանման գործընթացում:

• Տարածաբանում անդրսահմանային համագործակցության ծրագիրը կնդասի կենսաբազմազանության դաշտային իրական միջավայրի ստեղծմանը

Սկիզբը՝ էջ 11

Միջոցառումների մեկնարկը տրվել է Ախալքալաք քաղաքում «Ջավախեթի» պահպանվող տարածքների այցելուների կենտրոնի բացմամբ: Յուրեքը շրջայց են կատարել կենտրոնի տարածքում, ծանոթացել արգելավայրի ֆլորայի և ֆաունայի մուշներին: Ներկաները ծանոթացել են տեղական արտադրատեսականու շուկայի ներկայացուցիչների արտադրանքին: Ողջունելով ներկաներին՝ նախարար Արծվիկ Մինասյանը նշել է. «Առաջին անգամ տարածաշրջանային համագործակցության առարկայական արդյունք ենք տեսնում: Առաջին անգամ հնարավորություն է ընձեռվել, որպեսզի մենք Հարավային Կովկասում էկոտարածաշրջանային ծրագրի ներքո ունենանք բնության հատուկ պահպանվող տարածքներ, և միավորենք մեր ջանքերը՝ կենսաբազմազանության պահպանության իրական միջավայր ստեղծելու համար, ինչը հնարավորություն է տալիս բնապահպանական ծրագրերը դարձնել մեր տարածաշրջանի ապագային միտված արդյունավետ մեխանիզմներ»: Նա շնորհակալություն է հայտնել Վրաստանի բնապահպանական գերատեսչությանը և բոլոր շահագրգիռ կողմերին, ովքեր նպաստել են մեկնարկող ծրագրի կայացմանը և համոզմունք հայտնել, որ լավ սկիզբը կունենա այլ դրական զարգացումներ: Ըստ նախարարի՝ ներկայում բնության պահպանությունը պահանջում է բոլորի ջանքերի մեկտեղում և միայն այդ կերպ հնարավոր է ապագայում ունենալ կայուն զարգացում: Այս նպատակով Հայաստանը պատրաստակամ է համագործակցել անդրսահմանային համագործակցության բոլոր ձևաչափերով: «Համագործակցության առանցքը կենսաբազմազանության պահպանումն է, ինչը նաև բերելու է հատուկ պահպանվող տարածքների հարակից համայնքների բնակիչների բարեկեցության բարձրացմանը: Մենք խորապես համոզված ենք, որ կենսաբազմազանության պահպանությունը հնարավորություն է տալու բոլոր նրանց, ովքեր արժեվորում են բնությունը, բնության պահպանությունը, որպես նաև ապագայի հանդեպ պարտավորություն, նաև էկոհամակարգային ծառայություններով վաստակել շատ ավելի մեծ եկամուտներ և ունենալ երաշխավորված ապագա», - նշել է Ա. Մինասյանը և հավելել. «Շատ կարևոր է, որ բոլոր համայնքները, որտեղ կենսաբազմազանության տարրեր կան՝ ներգրավվեն այս ծրագրերում: Սա այն եզակի դեպքն է, որ համայնքներն ակտիվ մասնակցել են ազգային պարկերի ձևավորման գործին»: Վրաստանի շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների փոխնախարար Եկատերինա Գրիգալավան իր խոսքում կարևորել է երկու երկրների համագործակցությունը և նկատել, որ կողմերի ներդաշնակ աշխատանքը կնպաստի հասնել իրական թիրախային նպատակներին:

ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մաթիաս Կիսլերը բարձր է գնահատել բնապահպանական խնդիրների լուծման



գործում կողմերի ներդրած ջանքերը, ինչի վկայությունն է հաջողված ծրագրի մեկնարկը: Երկու երկրների ներկայացուցիչները եղել են Մադաթափա լճում, ծանոթացել թռչունների անդրսահմանային մոնիթորինգի գործընթացին: Հայաստանի և Վրաստանի պատվիրակությունների ղեկավարները Լճի մերձակայքից տվել են երկու երկրների հեծանվորդների անդրսահմանային երթուղու մեկնարկը:

ՀՀ Շիրակի մարզի Մեծ Սեպասար համայնքի զբոսաշրջության կենտրոնում միջոցառման մասնակիցները ծանոթացել են հայ արտադրողների արտադրատեսականուն: Շիրակի մարզպետ Արթուր Խաչատրյանը կարևորել է ծրագրի բնապահպանական բաղադրիչը և շեշտել զբոսաշրջության արդյունքում տեղի բնակչության ներգրավման հեռանկարը: Մեծ Սեպասար համայնքում տեղի է ունեցել երկու երկրների սահմանը հատած հեծանվորդների դիմավորման և պարգևատրման արարողությունը: ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանն Ամասիա համայնքում մասնակցել է նաև գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման կենտրոնի բացման արարողությանը: Կենտրոնը խորհրդատվությամբ և մասնագիտական այլ միջոցներով կաջակցի տեղի անասնապահներին, ինչը միտված է արոտավայրերը գերարածեցումից զերծ պահելուն:

Տեղեկանք

«Արփի լիճ» ազգային պարկը և «Ջավախեթի» պահպանվող տարածքները ստեղծվել են Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ) ֆինանսական աջակցությամբ՝ KfW զարգացման բանկի միջոցով: Պահպանվող տարածքների ստեղծման նպատակն է Ջավախք-Շիրակ բարձրավանդակի (Կովկասյան էկոտարածաշրջան) յուրօրինակ կենսաբազմազանության պահպանությունը, տարածաշրջանում կայուն համայնքային զարգացման խթանումը, ինչպես նաև բնապահպանության ոլորտում Հայաստանի և Վրաստանի միջև անդրսահմանային համագործակցության աջակցությունը:

Բնապահպանության փոխնախարար Էրիկ Գրիգորյանը Թաիլանդում

2017թ. սեպտեմբերի 6-8-ը ՄԱԿ-ի Ասիական և Խաղաղօվկիանոսյան տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողովի և ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի հրավերով ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Էրիկ Գրիգորյանը մասնակցել է Թաիլանդի թագավորության Բանգկոկ քաղաքում կայացած Ասիական և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի առաջին նախարարական վեհաժողովի բարձրաստիճանի հատվածի հանդիպմանը: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի բնապահպանական հարցերին: ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Էրիկ Գրիգորյանը հանդես է եկել ելույթով՝ ողջունելով Նախարարական հայտարարության նախագիծը, և ընդգծել, որ բնապահպանական խնդիրները պետք է լուծվեն տնտեսական և սոցիալական հարցերին զուգահեռ: Նա ներկայացրել է Հայաստանում կանաչ կլիմայական հիմնադրամի կողմից իրակա-



մանցվող ծրագիրը, որն աշխարհում 10-րդ և Եվրասիական տարածաշրջանում առաջինն է: Նա նաև նշել է, որ ներկայումս բնապահպանական ոլորտում ներդրումները շահավետ են ոչ միայն բնապահպանական, այլ նաև տնտեսական և սոցիալական տեսանկյուններից: Հանաժողովի ընթացքում է. Գրիգորյանն առանձին հանդիպումներ է ունեցել նաև ՄԱԿ-ի բնապահպանության ծրագրի ղեկավարի, Սինգապուրի բնապահպանության նախարարի, Ճապոնիայի և Կորեայի բնապահպանության փոխնախարարների, Չինաստանի, Իրանի, Ավստրալիայի, Մոնղոլիայի պատվիրակությունների ղեկավարների, ՄԱԿ-ի ներկայացուցիչների և այլ պաշտոնատար անձանց հետ:



ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը հասարակական խորհրդի նիստի ժամանակ ներկայացրել է նաև աղետի ժամանակ լիազոր գերատեսչությունների կատարված քայլերը և արված հետևությունները՝ հայտնելով, որ հրդեհի և դրան հաջորդած հետմարման միջոցառումների 24 օրերը ոչ միայն բոլորի համար լուրջ դաս էր, այլ նաև ուղորտում էր հայտ բերեց հիմնարար բացեր: «Հիմնական բացերից մեկը կապի միջոցների բացակայությունն էր և այդ մասին զեկուցվել է ՀՀ Նախագահի ու վարչապետի մոտ կայացած քննարկումների ընթացքում: ՀՀ Նախագահը հանձնարարել է Հայաստանի կապի օպերատորների հետ քննարկել և հարցին լուծում տալ, ինչին արձագանքել է ՎիվաՍել-ՄՏՍ ընկերությունը և ներկայումս այնպիսի կապի համակարգ է դիտարկվում, որով արգելոցում նվազագույն միջամտությամբ կապահովվի օդային կապ, ինչն իր հերթին կօգտագործվի ոչ միայն հրդեհների կանխարգելման, այլ

Հրդեհը ի հայտ բերեց ուղրտի հիմնական բացերը

նաև մոնիթորինգ իրականացնելու համար», - նշել է Ա. Մինասյանը և տեղեկացրել, որ նախատեսվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում իրականացնել նաև կադրային և կառուցվածքային հիմնարար փոփոխություններ՝ լուծելու օպերատիվ արձագանքման, արագ գործողություններ իրականացնելու և պահպանության (24 ժամյա) մակարդակը բարձրացնելու հարցերը: Նախարարն առաջնային է համարել նաև տեխնիկական զինվածության հարցերի լուծումը, ինչի ուղղությամբ բանակցություններ են տարվում գործընկեր պետությունների և դոնոր կազմակերպությունների հետ՝ նպատակ ունենալով երկրում ունենալ հրդեհների հակազդող տեխնիկապես հագեցած համակարգեր: Տեղեկացվել է նաև, որ սեպտեմբերի 19-ին բնապահպանական անդրսահմանային նախագծի մեկնարկը տալու նպատակով Վրաստան կատարած աշխատանքային այցի ժամանակ դիտարկվել է նաև նման տարածաշրջանային կենտրոնի ձևավորման հեռանկարը: Հայտնելով իր մտահոգությունը հրդեհի պատճառների հարցով՝ նախարարը հայտնել է, որ ստացված արբանյակային լուսանկարները և ձեռք բերված փաստերը կփոխանցվեն քննչական կոմիտե՝ լիարժեք քննության համար:

շարունակությունը՝ էջ 4 |

• Զրդեհը ի հայտ բերեց ոլորտի հիմնական բացերը

Սկիզբը էջ 31



Միտումնավոր հրդեհման վարկածի հաստատման դեպքում մեղավորները պետք է խիստ պատժի ենթարկվեն, իսկ ոչ միտումնավոր մարդկային գործոնի հաստատման դեպքում պետք է պարզվեն պատճառները: Ըստ Ա. Մինասյանի՝ մարդկային գործոնի հավանականությանը նպաստում է նաև արգելոցի կտրտված սահմանները, և այժմ խնդիր է դրված նոր կառավարման պլանով նաև այդ հարցը լուծել՝ «խոսրովի անտառ» արգելոցում ներառելով նրա սահմաններ սեպածն մտած տարածքները՝ նվազագույնը բուժֆերային գոտիների և արգելավայրերի տեսքով: Այս գործողություններն իրականացնելու համար նախարարությունն ակնկալում է հասարակական կազմակերպությունների և հանրության լայն շերտերի աջակցությունը: Թվարկված խնդիրների լուծման համար պահանջվում են զգալի միջոցներ ներգրավել պահպանվող տարածքներում էկոտուրիզմի զարգացումից և «Բնության պահպանություն՝ պարտքի դիմաց» գործընթացից:

Նորանշանակ տնօրենը եւ նրա ղեկավարած գրասենյակը պետք է դառնան նոր չափանիշների կրողներ

Նախարար Արծվիկ Մինասյանը «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի աշխատակիցներին է ներկայացրել ԶԶ վարչապետի որոշմամբ տնօրենի պաշտոնում նշանակված Մերուժան Գալստյանին: Ա.Մինասյանը շնորհակալություն է հայտնել նախկին տնօրեն Գևորգ Ներսիսյանին համատեղ աշխատանքի համար և նորանշանակ տնօրենին և աշխատակիցներին ներկայացրել պետական հիմնարկի աշխատանքների նոր սկզբունքները և առաջնային լուծման ենթակա խնդիրները: Բնապահպանության նախարարը շեշտել է, որ բոլոր նախաձեռնություններում պետք է առաջնահերթ դիտարկել տնտեսական էկոհամակարգային մոտեցումը, իսկ իրականացվող բնապահպանական ծրագրերի հիմնական բաղադրիչներից պետք է լինի հասարակության մոտ էկոմշակույթի ձևավորումը: Ա. Մինասյանը կարևորել է «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի միջոցով իրականացվող բոլոր դրամաշնորհային բնապահպանական ծրագրերի ծախսերի մասով հաշվետու լինելը հասարակության առաջ, հանձնարարել բարձրացնել դրանց արդյունավետությունը: «Այդ նպատակն է հետապնդում նաև իրականացվող ծրագրերի ներառումը պետական բյուջեում, դրանց իրականացման թափանցիկությունը և հրապարակայնությունն ապահովելու համար: Իսկ այն ծրագրերը, որոնք առարկայական պայմաններով չեն ներառվի բյուջեում, պետք է



նույն չափանիշներով թափանցիկ իրականացվեն: Միայն այդ ձևով կարելի է ստանալ հասարակության վստահությունը բնապահպանական ծրագրերի իրականացման գործընթացում», - նշել է բնապահպանության նախարարը: Ըստ Ա Մինասյանը, «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկն իր աշխատանքներով պետք է համապատասխանի ԶԶ բնապահպանության նախարարության՝ որպես շրջակա միջավայրի պահպանության հարցերում պատասխանատու, բնապահպանական քաղաքականություն իրականացնող գերատեսչության որդեգրած նոր չափանիշներին: «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի փոխտնօրեն Սամվել Բալոյանը ներկայացրել է ընթացիկ բնապահպանական ծրագրերը և առաջիկա անելիքները: Արծվիկ Մինասյանը շրջայց է կատարել «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի աշխատասենյակներով, ծանոթացել ստորաբաժանումների իրականացրած գործառնություններին՝ տվել համապատասխան հանձնարարականներ:

Ի՞նչ կորուստներ կան «խոսրովի անտառ» պետական արգելոցում հրդեհից հետո



ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանի նախագահությամբ կայացել է ՀՀ ԲՆ նախարարին կից գիտատեխնիկական խորհրդի հերթական նիստը: Օրակարգի հարցերը վերաբերել են «խոսրովի անտառ» պետական արգելոցում հրդեհված տարածքների ուսումնասիրություններին: ՀՀ ԲՆ աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալության բնության հատուկ պահպանվող տարածքների և դենդրոպարկերի կառավարման բաժնի պետ Արամ Աղասյանը ներկայացրել է «խոսրովի անտառ» պետական արգելոցում տեղի ունեցած հրդեհի հետևանքով ստեղծված իրավիճակի վերլուծությունը: «խոսրովի անտառ» պետական արգելոցի հրդեհված տարածքների բույսերի բազմազանության վիճակի և ինքնավերականգնման հնարավորության մասին տվյալներ է ներկայացրել ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Ժիրայր Վարդանյանը: Բնության համաշխարհային հիմնադրամի /WWF/ հայաստանյան մասնաճյուղի ծրագրի ղեկավար, կ.գ.թ. Արսեն Գասպարյանը ներկայացրել է իրենց կողմից իրականացված արգելոցի կենսաբազմազանության վրա հրդեհների ազդեցության ուսումնասիրությունը: Հրդեհների հետևանքների վերացման ուղղությամբ ամերիկյան գիտնականների կողմից տրված եզրակացությունը ներկայացրել է ՀՀ բնապահպանության նախարարի իրավախորհրդատու Արեգ Ղարաբեգյանը: Ըստ ներկայացված զեկույցների՝ նախնական հաշվարկներով հրդեհի մեջ ընդգրկված ընդհանուր տարածքը կազմում է մոտ 2200 հա, որտեղ չվառված տարածքը՝ 365 հա, շատ քիչ վառվածը՝ 525 հա, միջին վառվածը՝ 1200 հա, շատ վառվածը՝ 110 հա: Ըստ անտառչի-

նական քարտեզների՝ հրդեհի մեջ ընդգրկված տարածքում կաղնու անտառածածկ տարածքը կազմում է 900 հա, գիհուտը կազմում է 200 հա, իսկ խոտածածկը մոտ 1100 հա: Ուսումնասիրությունների համաձայն՝ ներկայումս արդեն հրդեհված տարածքներում ակնհայտ է բուսակազմության աճը, թեև, վերջնական պատկերացում կարելի է կազմել գարնանը: Միամյա խոտաբույսերի վիճակը արգելոցի բոլոր տեղամասերում կբացահայտվի աշնանային անձրևներից հետո, ինչպես նաև գարնանը՝ թափված կենսունակ սերմերի ծլելուց հետո: Բազմամյա և ծառափայլի բույսերի վերականգնումը ևս մեծ չափով կախված է ծլունակ սերմերի առկայությունից: Լայնատերև ծառատեսակների ամբողջությամբ այրված առանձնյակների վիճակը կբացահայտվի գարնանային վեգետացիայի ընթացքում: ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտում կկատարվի այրված տեղամասերից հավաքված պտուղների և սերմերի ցանք, հրդեհից հետո դրանց ծլունակությունը ստուգելու նպատակով: Երկամյա և բազմամյա խոտաբույսերի մոտ նշված տեղամասերում արդեն սկսվել են վերականգնման պրոցեսներ: Դրանց մոտ նոր ընձյուղներ են դուրս եկել արմատամերձ վարդակներից, որոշ տեսակների մոտ հասնելով մինչև 20 սմ բարձրության: Ինչպես բազմիցս ասվել էր, վերականգնման տեսանկյունից բարդությունը գիհու ծառատեսակն է ներկայացնում, որը ինքնին դժվար աճող տեսակ է: Բուսակազմության վերականգնման վերջնական վիճակը կբացահայտվի լրացուցիչ մոնիտորինգից հետո՝ աշնանը (անձրևներից հետո) հիմնականում խոտաբույսերինը) և գարնանը (հիմնականում՝ ծառերինը և թփերինը):

Հարունակությունը՝ էջ 5/

• Ի՞նչ կորուսներ կան «խոսրովի անտառ» ղեկավար արգելոցում հրդեհից հետո

Սկիզբը էջ 4 |

Արամ Աղասյանը նշել է, որ կենդանական աշխարհից խոշոր կաթնասունների կորուստներ չեն եղել, հրդեհն ընդգրկած տարածքում կրակից զերծ մնացած կղզյակներում անգամ միջատներն ու սողունները կարողացել են պատսպարվել: Դիտարկումները ցույց են տալիս, որ հրդեհված տարածքներում ֆաունայի ներկայացուցիչները վերադառնում են բնականոն ապրելաձևի: Ժիրայր Վարդանյանը նշել է, որ հրդեհի հետևանքով կարմիգրքային բուսերի տեսակի ոչնչացման խնդիր չկա: Արսեն Գասպարյանը անդրադարձել է նաև WWF-ի կողմից տրամադրված աջակցությանը՝ 15 հատ հրդեհմարման սարքեր և այլ տեխնիկա, 2 հատ 7 տոննա ծավալով ավազան և այլն: Արեգ Ղարաբեգյանը ներկայացրել է ԱՄՆ անտառային ծառայության «Այրված տարածքների վերականգնման և արտակարգ իրավիճակների կանխարգելման» աշխատանքային խմբի անդամների դիտարկումներ: Սեպտեմբերի 9-ին ուսումնասիրություններ կատարելով «խոսրովի անտառ» պետական արգելոցում խումբն արձանագրել է, որ հրդեհից կարճ ժամանակ անց նկատվում է բույսերի վերած, ինչը վկայում է այն մասին, որ դրանց արմատային համակարգերը վնասված չեն: Տերևակալումներ են նկատվել նաև հրդեհից վնասված լայնատերև ծառերի մի մասի մոտ: Իրականացվել են համապատասխան փաստագրումներ և զնահատումներ: Դիտարկել են նաև արգելոցում առկա ջրային համակարգե-

րը, հակահրդեհային ենթակառուցվածքների առկա համակարգերը (ճանապարհները, գետերը, աղբյուրները): Գնահատել անտառային և խոտածածկ հատվածներին հասցված վնասը, հողի մակերեսի այրվածքների խորությունը: Խորհրդի անդամների են ներկայացվել նաև ամերիկյան կողմից ստացված արբանյակային պատկերները: Խմբի կողմից տրամադրվելիք եզրակացությունը հիմք կարող է հանդիսանալ նաև տեխնիկական աջակցության համար: Ստբերի փոխանակության ընթացքում կարևորվել է ռիսկերի զնահատման, տեխնիկական վերազինման, կադրերի վերապատրաստման և մասնագիտական կարողությունների հզորացման, արգելոցում դիտարկումների շարունակականության և մի շարք այլ հարցերի անհրաժեշտությունը: Նիստի ավարտին խորհրդի անդամների ուշադրության է ներկայացվել նաև «ԱՐՄԱԿ» ջրամատակարարման ինքնաշխատ համակարգեր ընկերության անտառներում հրդեհների կանխարգելման ու հրդեհաշիջման նախնական աշխատանքների իրականացման շրջանակներում հիդրոհարվածային պոմպի կիրառման նպատակահարմարության վերաբերյալ առաջարկը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել այցելել ընկերություն «Քունակն» ինքնաշխատ ջրամատակարարման համակարգի աշխատանքի և դրա կիրառման հնարավորությունների մանրամասներին տեղում ծանոթանալու համար:



Աշխատել փոխօգնության եւ պատասխանատվության բարձր զգացումով

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Ե. Տերտերյանի մոտ կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ կայացավ անդրանիկ խորհրդակցությունը: Ե.Տերտերյանը ողջույնի խոսքում շնորհավորեց ստորաբաժանումների նորանշանակ ղեկավարներին պաշտոնների ստանձնման կապակցությամբ և մաղթեց արգասաբեր աշխատանք՝ հորդորելով աշխատանքները կազմակերպել փոխօգնության, պատասխանատվության բարձր զգացումի և փոխադարձ հարգանքի մթնոլորտում: Քննարկվեցին տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված խնդիրները, Ե. Տերտերյանի կողմից տրվեցին հանձնարարականներ, մասնավորապես հանձնարարվեց՝ խստացնել խեցգետնի որսի վերահսկողությունը, կազմված արձանագրությունների վերաբերյալ ներկայացնել ամենշաբաթյա և ամսա-

կան ամփոփ հաշվետվություններ, սիրողական որսաշրջանի բացման հետ կապված՝ խստացնել որսի վերահսկողությունը և տրամադրել ամենշաբաթյա հաշվետվություն վերահսկողական գործընթացների, կազմված արձանագրությունների մասին, ԱԱԾ և ՀՀ ՀԲԾ կողմից հարուցված քր. գործերով նշանակված, տեսչական մարմնի ղեկավարի 14.09.2017 թվականի հանձնարարագրերի հիման վրա «Հայանտառ» ՊՈԱԿ անտառտնտեսություններում (Սյունիքի, Տավուշի և Լոռու մարզերում) արդեն իսկ սկսված ստուգումներն իրականացնել պատշաճ կերպով և բարձր պատասխանատվությամբ: Տեղի տարածքային ստորաբաժանումներին հանձնարարվեց օժանդակել ստուգող խմբի աշխատանքներին, աշխատանքներ տանել չգրանցված տնտեսվարող սուբյեկտներին հայտնաբերելու և օրինական դաշտ բերելու ուղղությամբ: Ինչպես նաև այլ կազմակերպչական և գործավարական հանձնարարականներ:

Կլոր սեղան Ստեփանավանում՝ Նվիրված Օզոնային շերտի պահպանության միջազգային օրվան



Սեպտեմբերի 14-15-ին ՀՀ բնապահպանության նախարարության կողմից նախաձեռնած օզոնային շերտի պահպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումների շարքը մեկնարկել է Հայաստանի բնության պետական թանգարանից, որտեղ տեղի է ունեցել բնապահպանության թեմաներով նկարչական մրցույթ, ինչին հաջորդել է հաղթած դպրոցահասակ երեխաների պարզապատկերում և շրջայց թանգարանում: Օզոնային շերտի պահպանության միջազգային օրվա 2017թվականի խորագիրն է «30 տարի Մոնրեալի արձանագրությունը պաշտպանում է մեզ արեգակից»: Միջոցառումները շարունակվել են ՀՀ բնապահպանության նախարարության «Արգելոցապարկային համալիր» ՊՈՒԿ-ի ենթակայությամբ գործող Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում: Դենդրոպարկում մեկնարկը տրվել է կլոր սեղանի քննարկումներով, որին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված բնապահպանական կոնվենցիաների ազգային համակարգողները և ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումները ներկայացնող 25 աշխատակիցներ: Քննարկումների հիմքում ընկած էր Մոնրեալի արձանագրությամբ ամրագրված բնապահպանական կոնվենցիաների փոխկապակցության և համագործակցության խնդիրները, ինչը պարտադիր պայման է բնապահպանական հիմնահարցերի լուծման տեսանկյունից: Ողջունելով կլոր սեղանի մասնակիցներին Օզոնի ազգային կենտրոնի համակարգող Լիանա Ղահրամանյանը ներկայացրել է օզոնային շերտի պահպանության ուղղությամբ Հայաստանի Հանրապե-

տության իրականացրած գործողությունները և առաջիկա անելիքները: Նա ընգծել է, որ բնապահպանության յուրաքանչյուր ոլորտ չի կարող դիտվել որպես առանձին խնդիր, այլ դրանք պետք է դիտարկել բնապահպանական, սոցիալ-տնտեսական բոլոր խնդիրների հետ փոխկապակցված և ջանքերն ուղղել խնդիրների լուծման համագործակցված և փոխկապակցված միջոցներին: Այնուհետ կոնվենցիաների համակարգողները ներկայացրել են մեկ տարվա ընթացքում կատարված աշխատանքները և հետագա անելիքները: Կլոր սեղանի ավարտին հաջորդել է Ստեփանավանի համայնքի աղջիկների երգչախմբի ելույթը, իսկ կատարած Կոմիտասի մի քանի ստեղծագործությունները մեծ հմայք են տվել միջոցառմանը: Դենդրոպարկում կազմակերպվել է էկոլոթթական դասընթաց, որը իրականացրել էր ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության էկոլոթթության բաժինը՝ համապատասխան ոլորտային մասնագետների մասնակցությամբ: Դասընթացին մասնակցում էին Դենդրոպարկի հարակից տարածքներից մոտ 150 դպրոցականներ, որի նպատակն էր հարստացնել աշակերտների գիտելիքները շրջակա միջավայրի, ինչպես նաև մեր երկրի բնապահպանական հիմնախնդիրների և նրանց հնարավոր լուծման ուղիների վերաբերյալ: Դասընթացների ընթացքում ներկայացվել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են օզոնային շերտի հիմնախնդիրը և պաշտպանությունը եւլտրամանուշակագույն ճառագայթներից, օզոնն ու ջրային ռեսուրսները, օզոնն ու կլիմայական փոփոխությունները, օզոնն ու կենսաբազմազանությունը: Դասընթացին զուգահեռ գործում էր ևս մի հարթակ, որտեղ Դենդրոպարկի հարակից համայնքների դպրոցների սաները բաց երկնքի տակ նկարել և օրվա ավարտին ներկայացրել են բնապահպանական թեմայով իրենց ստեղծագործությունները: Միջոցառումների վերջին օրը երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ուսանողների մասնակցությամբ կազմակերպվել է գրաֆիտի նկարչությունը Երևանի N91 մանկապարտեզի տարածքում: Ուսանողները աշխատանքների միջոցով պատկերել էին իրենց տեսլականը օզոնային շերտի քայքայման հիմնախնդրի վերաբերյալ:

Խոսքից ի գործ...



**ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԼԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ**

**Հայտարարում են պլակատի մրցույթ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ**

**Աշխատանքները ներկայացնել մինչև 20.11.2017 թ.,
Հայաստանի նկարիչների միության
էլեկտրոնային հասցեով.
artunion_75@yahoo.com
JPG ֆորմատով**

**Նախատեսված են հետևյալ մրցանակները
(ներառյալ ավելացված արժեքի հարկը)՝**

- 1-ին մրցանակ - 150.000 դրամ -1 հատ
- 2-րդ մրցանակ - 100.000-ական դրամ -2 հատ
- 3-րդ մրցանակ - 50.000-ական դրամ -3 հատ

Բավական է շրջել երկրում և բնության հանդեպ դրսևորվող վերաբերմունքը կմտանի, որ մեզանում կա բավարար մակարդակի էկոմշակույթի ձևավորման անհրաժեշտություն: Դա է պատճառը, որ էկոդաստիարակությունը բնապահպանության նախարարության գերակա խնդիրների շարքին է դասվում: Այս նպատակին հասնելու համար նախարարությունը մշակել է քայլերի համակարգ, որոնցից է կերպարվեստի միջոցով հասարակության մոտ էկոլոգիական մշակույթի ձևավորումը: Ինչպես արդեն գրել էինք մեր թերթի նախորդ համարում Սեպտեմբերի 5-ին ՀՀ բնապահպանության նախարարության և Հայաստանի նկարիչների միության միջև ստորագրվել էր փոխըմբռնման հուշագիր, որով կողմերն արտահայտել էին ընդհանուր կամք՝ բնապահպանական խնդիրների լուծման գործում հասարակության լայն շերտերի ներգրավման, էկոմշակույթի ձևավորման հարցերում համագործակցության վերաբերյալ:

Եվ ահա, առաջնորդվելով հուշագրի դրույթներով, Հայաստանի նկարիչների միությունը բնապահպանության նախարարության աջակցությամբ հայտարարել է բնապահպանական թեմաներով պլակատների մրցույթ:



Հայտարարվեց բնապահպանական թեմաներով պլակատների մրցույթ

**Նախագիծը՝ Արծուն Պեղանյանի
խմբագիր՝ Սանվել Սկրչյան
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության**

Հեռախոս՝
011 818 517